ԹԱՄԱՐԱ ՍՈՒՐԱԴՅԱՆ

ԵՊԿ երաժշտագիտական բաժնի բակալավրական 2-րդ կուրսի ուսանող

Ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյան

ԷԴՈՒԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐ

XX դարը՝ հայ կոմպոզիտորական արվեստում նշանակալի ժամանակաշրջան էր, հարուստ երաժշտական իրադարձություններով և մեծանուն կոմպոզիտորներով: Հայ մշակույթի անվանի գործիչները հայրենի երաժշտությունը ներկայացնում էին միջազգային հարթակներում:

Սակայն, այդ ստեղծագործողներից ոչ բոլորն էին արժանանում համարժեք գնահատանքի, ինչը պահանջում էր նրանց թողած ժառանգությունը: Ժամանակի ընթացքում, այդ ժառանգությունը նորովի է բացահայտվում, հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործություններ վերահմաստավորվում և ստանում են համերգային նոր կյանք:

Այս համատեքստում, սույն հոդվածը նվիրված է հայ անվանի կոմպոզիտոր և դաշնակահար Էդուարդ Բաղդասարյանին (1922-1987 թթ.):

Է. Բաղդասարյանն իր երաժշտության մեջ ներդաշնակորեն համադրել է ազգային և եվրոպական երաժշտության լավագույն միտումները՝ մասնավորապես ռոմանտիկական և իմպրեսիոնիստական:

Է. Բաղդասարյանն ապրել և ստեղծագործել է այնպիսի մեծանուն դեմքերի կողքին ինչպիսիք են Ա. Բաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը, Ա. Տերտերյանը և այլոք: Միևնույն ժամանակ, նա նոր էջ է բացել հայ կոմպոզիտորական արվեստում:

Լինելով բազմաժանր և բազմաոճ կոմպոզիտոր, իր ժառանգության մեջ Է. Բաղդասարյանը կենտրոնական տեղ է հատկացրել դաշնամուրային ստեղծագործություններին: Իբրև տաղանդավոր դաշնակահար, կատարելապես զգալով գործիքի հնարավորությունները, Էդուարդ Բաղդասարյանը զգալի ներդրում է ունեցել հայ դաշնամուրային արվեստի պատմության մեջ:

Բաղդասարյանը քաջատեղյակ էր դաշնամուրային գրականությանը, ստեղծում էր հիանալի դաշնամուրային գործեր: Ընկերների և իր աշակերտների շրջապատում նա կարող էր կատարել օտարազգի կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործություններ և, ոչինչ չփոխելով, հայկական բուրմունք տալ այդ գործերին: Նա կարող էր անել նաև հակառակը՝ կատարել հայկական մեղեդի՝ Չայկովսկու, Լիստի կամ Սկրյաբինի ոճով: Այստեղ դրսևորվում էր կոմպոզիտոր-ինպրովիզատորի տաղանդը:

Բաղդասարյանի դաշնամուրային ժառանգությունն իր մեջ ներառում է դաշնամուրային կվինտետը, կոնցերտային պիեսներ, էտյուդ-պատկերը, պրելյուդը և սկերցոն ջութակի և դաշնամուրի համար, արևելյան պատկերը, իր վերջին շրջանի ամենախտրոր գործը՝ դաշնամուրային կոնցերտը (1978 թ.): Շատ հայտնի են կոմպոզիտորի դաշնամուրային 24 պրելյուդը (1948-1960 թթ.):

Նա իր պրելյուդներում օգտագործում է գունագեղ ձայնային տեխնիկա, «թափանցիկ գույներ, թարմ տեմբրեր: Դրանք մոտ են Սկրյաբինի և Լյադովի մանրանվագներին (1.):

Կոմպոզիտորի ժառանգությունն ընդգրկում է նաև կոնցերտ, նախերգանք, կվինտետ ռապսոդիա, բալետ, սյուիտներ, երաժշտական կոմեդիաներ, «Ռոմեո և Ջուլիետտա»» ներկայացման համար գրված երաժշտությունը, ռոմանսներ, երգեր: Է. Բաղդասարյանի ակնառու սիմֆոնիկ գործերից են Պոեմը (1950 թ.), Սյուիտը (1963 թ.), Պարային սյուիտը՝ փոքր սիմֆոնիկ նվագախմբի համար (1968 թ.):

Բավական լայն ճանաչում է ստացել Բաղդասարյանի Ռապսոդիան ջութակի և նվագախմբի համար (1958 թ.), որն աչքի է ընկնում խոր հուզականությամբ, ձևի հստակությամբ և մենանվագ գործիքի հնարավորությունների առանձնահատուկ մեկնաբանմամբ: Ռապսոդիան դարձել է նվագացանկային գործ, ժամանակին գրի է առնվել ձայնապնակի վրա: 1956-ին Մոսկվայում, հայկական արվես-

---

Զեկուցումն ընթերցվել է ԵՊԿ-100-ամյակին նվիրված ԵՊԿ ՈՒԳՍԸ գիտաժողովի շրջանակներում: Երաշխավորվել է հրատարակության ԵՊԿ խմբագրական խորհրդի առաջարկով:

տի և գրականության տասնօրյակին հաջողությամբ կատարվել է Է. Բաղդասարյանի և Ս. Զրբաշյանի «1905 թիվ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը (խոսք՝ Հ. Ղուկասյանի):

Է. Բաղդասարյանի ժառանգության հետաքրքիր բնագավառներից են երգերն ու ռոմանսները: Բանաստեղծական տեքստի տեղին ընտրությունը, խոսք-երաժշտության ներդաշնակ կապը հատուկ է Է. Բաղդասարյանի ռոմանսներին՝ գրված ոչ միայն հայ, այլև օտարազգի բանաստեղծների տեքստերով (Ա. Պուշկինի «Ձմեռային ճանապարհ», «Վրաստանի բլուրների վրա» և այլն):

60-ականներին ռադիոյով և հեռուստատեսությամբ հաճախ հնչում էին Էդուարդ Բաղդասարյանի էստրադային, նվագախմբային, մանկական մեներգերն ու խմբերգերը՝ («Միշտ առաջ», «Կարոտ» (խոսք՝ Վ. Հարությունյանի), «Երգ խաղաղության», «Հայրենիք», «Աղջկա երգը»):

Այդ երգերից շատերն արժանացել են տարբեր մրցանակների:

Թբիլիսին իր հարուստ մշակութային կյանքով, Բաղդասարյանի ծննդավայրն էր, այնտեղ էլ նա ստացավ սկզբնական կրթությունը: Որոշ ժամանակ սովորելով Թբիլիսիի կոնսերվատորիայում, այնուհետև նա իր ուսումնառությունը շարունակում է Երևանի պետական կոնսերվատորիայում: Ուսանողական տարիներին են գրվել Բաղդասարյանի կլառնետի և դաշնամուրի համար Սոնատը, լարային Կվարտետը, երգեր ու ռոմանսներ, իսկ որպես դիպլոմային աշխատանք՝ 1950-ին Բաղդասարյանը ներկայացրեց իր սիմֆոնիկ Պոեմը: Կարևոր էր այն փաստը, որ երիտասարդ երաժիշտը կոնսերվատորիայուս սովորել է երկու բաժնում՝ դաշնամուրային և կոմպոզիցիայի: Այստեղից է նաև ժանրերի ընտրությունը. Բաղդասարյանի ստեղծագործությունների մեծ մասը գրված են հենց դաշնամուրի համար:

Էդուարդ Բաղդասարյանը, ինչպես շատ հայ կոմպոզիտորներ, կոնսերվատորիայում ուսումն ավարտելուց հետո, կատարելագործվել է Մոսկվայի Արվեստի տանը (1951-1953 թթ.):

Էդուարդ Բաղդասարյանի կյանքում կարևոր էր ֆոլկլորային գիտարշավի ղեկավարումն ու ֆոլկլորային երգերի հավաքագրումը Սիսիանի շրջանում: Հետագայում ակներև է ժողովրդական երգերի դերն իր կոմպոզիտորական արվեստում: Հետաքրքրության են արժանի աշուղ Ջիվանու, գուսան Աշոտի երգերի, Զանգեզուրի հորովելի և այլ ժողովրդական մեղեդիների մշակումները:

Ընդհանուր առմամբ Բաղդասարյանի ստեղծագործական կյանքը կարելի է բաժանել երեք փուլի՝ 1948-1956 թթ., երբ գրվեցին ուսանողական տարիների գործերը և, երբ երիտասարդ կոմպոզիտորն սկսեց ծավալել նաև մանկավարժական գործունեություն:

1956-1966 թթ. Է. Բաղդասարյանի ստեղծագործական ամենաբեղուն շրջանն էր, երբ նա գլխավորում էր Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության կվինտետը, հանդես էր գալիս որպես դաշնակահար և հենց այս կվինտետի համար ստեղծում էր էստրադային երգեր, պիեսներ: Այս տարիներին է ստեղծվում ամենանշանակալից գործերից մեկը՝ ջութակի և նվագախմբի Ռապսոդիան (1958 թ.):

Էդուարդ Բաղդասարյան

Բաղդասարյանի գործիքային երաժշտությունն այնքան պատկերավոր է, որ նա նույնիսկ դիմել է բալետի ժանրին: Այդ ժանրի միակ նմուշն է 1960 թ. գրված «Շախմատ» բալետը:

Կոմպոզիտորի հաջորդ շրջանը կարելի է համարել 1966-ից մինչև իր կյանքի վերջն ընկած տարիները: Այս ժամանակահատվածում գրված գործերից հայտնի են. 1968-ին գրված պարային Սյուիտը փոքր սիմֆոնիկ նվագախմբի համար, Հումորեսկը, Էտյուդ-պատկերը դաշնամուրի համար և դաշնամուրի և նվագախմբի Կոնցերտը:

Էդուարդ Բաղդասարյանի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության այս նախնական փուլում, մենք ծանոթացել ենք կոմպոզիտորի դաշնամուրային մշակումներին և փոխադրումներին , որոնք հրատարակվել են երկու անգամ 1973 և 1983 թվականներին, «Հայկական պարեր» խորագրով: Դրանցում ներառված են հայկական ժողովրդական պարերի, Տ. Չուխաջյանի, Ա. Տիգրանյանի, Ա. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի, Խ. Ավետիսյանի, Ա. Բաբաջանյանի և հենց իր ստեղծագործություններից հատվածներ՝ ավելի դյուրացված դաշնամուրի համար:

«Ինձ միշտ զարմացրել է Էդուարդ Բաղդասարյանի հարմոնիկ լսողությունը: Իր ներդաշնակ, կոմպոզիտորական ոճը ճանաչելի է անմիջապես առաջին տակտերից: Նա վարժ տիրապետում էր «բոլոր, երաժշտական լեզուներին՝ դասական, ջազ, էստրադային» (2.). - *ասել է կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանը:*

Բաղդասարյանի թերևս ամենահայտնի, ամենակատարվող ստեղծագործություններից մեկն է «Նոկտյուրնը», գրված ջութակի և դաշնամուրի համար:

Նոկտյուրնը որպես ռոմանտիզմի դարաշրջանին բնորոշ ժանր, արտահայտում է ռոմանտիկական հուզականություն, երգային ոճ: Սակայն միևնույն ժամանակ, այստեղ կոմպոզիտորն ի ցույց է դնում գործիքի հնչողության այնպիսի գունային գամմա, որը բնորոշ էր իմպրեսիոնիստներին:

Հենց առաջին նոտաներից զգացվում է իմպրեսիոնիստներին բնորոշ բնության գունապնակի և բնական լույսի խաղերը: Այստեղ ակներև են նաև ժողովրդական տարրերը, ժողովրդական երգի օգտագործումը: Ջութակի տեմբրային գեղեցկությունը, կարծես Բաղդասարյանը

նույնացրել է քամանիի քաղցրահունչ ձայնին: Մեր դի տարկմամբ, այս ստեղծագործության ջութակի բաժնում ընդգծված և երգային մեղեդային գիծը, կարող է կատարվել նաև մարդկային ձայնով՝ դառնակով Վոկալիզ:

Այս ստեղծագործությունն առանձնահատուկ է այն բանով, որ այս փոքրածավալ գործում միավորված են երեք տարբեր ոճեր՝ ռոմանտիկական, իմպրեսիոնիստական և հայկական ժողովրդական: Սա ոճավորում չէ, այլ կոմպոզիտորական ինքնատիպ մտածողության և տաղանդի դրսևորում:

Ճիշտ է, այս ստեղծագործությունը վերնագրված է որպես նոկտյուրն, սակայն այն կարող է կոչվել նաև «Երգ առանց խոսքի», որն, ինչպես գիտենք, կրկին ի հայտ է եկել ռոմանտիզմի ժամանակաշրջանում:

Երգայնության և վառ կերպարայնության շնորհիվ ստեղծվել են Նոկտյուրնի տարբեր փոխադրումներ՝ թավջութակի, սաքսոֆոնի, ֆլեյտայի համար:

Նոկտյուրնը ևս մեկ վկայություն է Է. Բաղդասրյանի հարմոնիկ լեզվի բացառիկության, ինքնատիպության, արտահայտչականության: Սա այս ժանրի բացառիկ դրսևորումներից է, որն իր գեղարվեստական արժանիքներով կարող է դասվել Ա. Խաչատրյանի դաշնամուրի և ջութակի համար գրված «Երգ-պոեմի» կողքին, որպես հայկականության՝ գուսանական երաժշտության տարրեր պարունակող նմուշ:

Մեր օրերում հաճախ է կատարվում Նոկտյուրնի ջազային մշակումը (Ռաֆայել Պետրոսյան տրիոյի կողմից): Նոկտյուրնի յավագույն կատարումներից է նաև Սերգեյ և Լուսինե Խայատրյանների մեկնաբանումը:

Էդուարդ Բաղդասարյանն այն հեղինակն է, ուս ստեղծագործական ժառանգությունը պետք է ուսումնասիրվի նորովի և հնարավոր ընդգրկումով: Այսօր ասպարեզում գոյություն չունի Բաղդասարյանին նվիրված որևէ հիմնավոր մենագրություն կամ ուսումնասիրություն: Չնայած, նույնիսկ կոմպոզիտորական արվեստին քիչ ծանոթ ունկնդրին ճանաչելի են այնպիսի ֆիլմերի մեղեդիներ, ինչպիսիք են «Եռանկյունին», «Տժվժիկը», «Ոսկե ցլիկը»:

Ցավալի է այն իրողությունը, որ խնդիրներ կան՝ կապված կոմպոզիտորի արխիվի հետ: Մենք փորձում ենք հավաքել և մեկտեղել Էդուարդ Բաղդասարյանի երաժշտական ժառանգությունը, նրան վերաբերող բոլոր հրապարակումներն ու նյութերը: ԵՊԿ-ի գրադարանից և ձայնադարանից դուրս ենք բերել կոմպոզիտորի երաժշտական ստեղծագործությունների ցանկն ու նոտային գրականությունը, հնարավորինս հավաքել ենք նրա երաժշտության սակավաթիվ ձայնագրությունները:

Համագործակցում ենք իր աշակերտների, իր հետ առնչված, հատուկենտ ժամանակակիցների հետ. Տիգրան Մանսուրյանի, Մելիք Մավիսակալյանի, Մարտին Վարդազարյանի: Մեր աշխատանքներում հատկապես կարևորում ենք ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոնի պրոֆեսոր Ա. Բուդաղյանի օգնությունը, ով մեզ է տրամադրում իր մոտ գտնվող նյութերը:

Կապ ենք հաստատել նաև Է. Բաղդասարյանի՝ ԱՄՆ-ից վերադարձած թոռնուհու՝ Անի Բաղդասարյանի հետ, ով մեզ է փոխանցելու կոմպոզիտորի մասին պահպանված նյութերը:

Մենք համագործակցում ենք ԱՄՆ-ի Ջորջիա նահանգի, երաժշտության պրոֆեսոր Ռաֆֆի Բեսալյանի հետ, ով վերջերս Ճապոնիայում ձայնագրել և թողարկել է Է. Բաղդասարյանի Պրելյուդները: Բեսալյանը Պրելյուդները խմբագրել է նոր մատնադրությամբ: Պրելյուդների այդպիսի մեկնաբանությունն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում:

Էդուարդ Բաղդասարյանի երաժշտական ժառանգության ուսումնասիրությունը մեր կողմից լինելու է շարունակական:

ՕԳՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ափոյան Շ. Հ., Սովետական Հայաստանի դաշնամուրային արվեստը, Եր., Հայաստան,1968 թ., էջ 117: Apoyan Sh. H., Sovetakan Hayastani dashnamurayin arvest', Yer., Hayastan, 1968 th., ejj 117.
2. Մաղաքյան Ս. Հ., Հայաստանի Կոնցերտմեյստերները, Եր., Լուսակն, 2019 թ., էջ 51: Maghaqyan S. H., Hayastani kontzertmaysterner', Yer., Lusakn, 2019 th., ejj 51.
3. Աթայան Ռ. Ա., Հայ կոմպոզիտորներ, Եր., 1956 թ.: Athayan R. A., Hay kompozitorner, Yer., 1956 th.
4. Թութունջյան Ա. Գ., Jazz in Armenia., Եր., Անտարես, 2014 թ.: Thuthunjyan A. G., Jazz in Armenia., Yer., Antares, 2014 th.

Բանալի-բառեր. *Էդուարդ Բաղդասարյան, կոմպոզիտոր, երաժշտական ժառանգություն դաշնամուրային ստեղծագործություններ, արվեստ:*

Ключевые слова: *Эдуард Багдасарян, композитор, музыкальное наследие, произведения для фортепиано, искусство.*

Keywords: *Eduard Baghdasaryan, Composer, Musical Legacy, Works for Piano, Art.*

Տեղեկություններ հեղինակի մասին. *ՄՈՒՐԱԴՅԱՆ ԹԱՄԱՐԱ երաժշտագետ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի բակալավրական 2-րդ կուրսի ուսանող: Ղեկավար՝ ԵՊԿ դոցենտ, արվեստագիտության թեկնածու Լուսինե Զավենի Սահակյան:*

Сведения об авторе: *МУРАДЯН ТАМАРА, музыковед, студентка 2-го курса бакалавриата Ереванской государственной консерватории им. Комитаса. Руководитель - доцент ЕГК, кандидат искусствоведения Лусине Саакян.*

Information about the author: *MURADYAN TAMARA musicologist, second-year student at the Yerevan State Conservatory after Komitas. Supervisor - PhD of Arts, Docent Lusine Zaven Sahakyan.*

Резюме

Музыковед, студентка 2-го курса бакалавриата Ереванской государственной консерватории им. Комитаса *Тамара Мурадян. - "Эдуард Багдасарян: творческий портрет".*

Одним из выдающихся представителей армянского музыкального искусства является композитор и пианист Эдуард Багдасарян, разнохарактерная музыкальная деятельность которого нуждается в новой оценке. Творческое наследие композитора представлено разностилевыми и многожанровыми произведениями: симфоническая поэма, концерт, прелюдия, мутыка для театральных спектаклей. Наиболее своеобразная и примечательная отрасль творчества Багдасаряна — фортепианное искусство.

В статье представлены этапы, примечательные музыкальные произведения творческой жизни Э. Багдасаряна.

Summary

Musicologist, second-year student at the Yerevan State Conservatory after Komitas *Tamara Muradyan. - "Eduard Baghdasaryan: Artistic Profile".*

Edouard Baghdasarian, composer and pianist, was one of the most distinguished representatives in Armenian music, whose versatile musical activity deserves renewed and expanded review. The composer's artistic legacy includes a variety of forms and genres, such as symphonic poems, concertos, preludes, as well as music for theatrical productions. The most distinctive and significant part of Baghdasarian's art was piano music.

The article presents the most important periods and works in the artistic life of Eduard Baghdasaryan.